

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժին,
գիտաշխատող
Էլ.փոստ՝ mtigran2002@yahoo.com
DOI: 10.56813/2953-786X-2023.3-61
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՍԿԱԼԵԶՈՒ
ՎԻՄԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ¹⁹

Ներածություն

Հայաստանի տարածք VIII-XIX դդ. ներթափանցած տարբեր մուսուլման հարստությունների, ցեղախմբերի ներկայացուցիչների հետքերը հանդիսացող արաբատառ վիմագիր արձանագրությունների շարքում (որոնց ճնշող մեծամասնությունը արաբերեն են, քանի որ XIX դարավերջի և XX դարասկզբի տապանագրեր են) կան նաև պարսկերեն արձանագրություններ:

Հոդվածում դիտարկվում են Հայաստանի տարածքում հայտնաբերված պարսկերեն կամ պարսկերենի ազդեցությամբ արված վիմական կամ առարկաների վրա արված արձանագրությունները:

Այժմյան Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված պարսկալեզու վիմագրական ժառանգությունը նրա արաբատառ վիմագիր ժառանգության անբաժանելի մասն է հանդիսանում՝ արտացոլելով հայկական միասնական պետականության բացակայության պայմաններում մուսուլման տիրակալների կողմից Արևելյան Հայաստանի մի քանի հարյուրամյակ տևած նվաճման և մուսուլման զանգվածի ներթափանցման (ինչը խրախուսվում էր նվաճողների կողմից) արդյունքում առաջացած վիմագրական հետքը: Այս առումով, Արևելյան Հայաստանի համար հատկապես ողբերգական էր Սեֆյան շահ Շահ-Աբբասի տիրակալության տարիները, որի

¹⁹ Հոդվածը ընդգրկում է ներկայիս Հայաստանի Հանրապետության և ոչ թե պատմական Հայաստանի տարածքը:

ընթացքում օսմանյան սուլթանների դեմ «այրված հողի» մարտավարության կիրառման արդյունքում 1604 թ. և հետագա տարիներին, գրեթե ամբողջ հայ բնակչությունը թշվեց Իրան և փոխարենը սկսվեց թյուրքալեզու ցեղերի՝ որպես ռազմական ուժի ներթափանցումը Արևելյան Հայաստան:

Հայաստանի Հանրապետության տարածքում մինչ այժմ հայտնաբերված արաբատառ վիմագիր արձանագրությունների ճնշող մեծամասնությունը արաբերեն են, քանի որ VII դարից՝ արաբական նվաճումներից ի վեր արաբերենը լայն տարածում գտավ որպես Արաբական խալիֆայության և իսլամի լեզու և դեռ այդպիսին էր երկար ժամանակ, անգամ, թույլ Աբբասյան խալիֆայության գոյության պայմաններում, երբ իրական քաղաքական և ռազմական իշխանությունը իրանական և թյուրքալեզու մուսուլմանական հարստությունների ձեռքին էր:

Միջնադարյան արաբատառ վիմական արձանագրությունները հաճախ սահմանափակվել են արաբերենով, եթե գրվել են հայ իշխանների կողմից (օրինակ Արծրունիների հարստության հիշատակումը Ամբերդի սալաքարի վրա (XII դար))²⁰: Արաբերենը օգտագործվել է նաև իրանցի Շադդադյանների կողմից (Դաշտադեմի (Թալին)) 1174թ.-ի միջնաբերդի աշտարակի վրա²¹ և Անիի արձանագրություններում²²:

Սակայն պարսկերենը օգտագործվել է արաբերենի կողքին, եթե ոչ պաշտոնական բնույթ է կրել: Այսպես, IX-X դարերով թվագրվող արաբարեն ամենահին՝ քուֆի գրատեսակով Գառնու տաճարի վրա արված գրաֆիտիների շարքում կան նաև պարսկերեն վիմագրերի պատահիկներ, ինչպես օրինակ, دعا گفت («աղոթք արեց») արտահայտությունը (տաճարի մուտքից աջ) և نوشروان Լուշիրվան անունը²³ (Նկար 1): Մեզ հաջողվեց կարդալ նաև رفت «գնաց» բառը (Նկար 1): Հայտնի է Թավրիզցի Բահրամ


²⁰ А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, с. 47.

²¹ А. Хачатрян, Нижнетаалинская арабская надпись, 570/1174 г., ИФЖ, 4, 1979, с.46.


²² А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, с. 53-54.

²³ Լույս տեղում՝ էջ 53:

քարտաշի նասխ գրատեսակով արված վիմագիրը²⁴ (Նկարներ 2, 3), որը, դատելով գրատեսակից, ավելի ուշ շրջանով պետք է թվագրել:



Նկար 1



16 A (№ 16)

16 B (№ 16)

نوشتہ بدین جا همین نامی من
خود/ یاچه باشد سرانجامی من
بهرام سنکتر اش تبریز

[1] نوشتہ بدین جا همین نامی¹ من
[2] خود² یاچه باشد سرانجامی³ من
بهرام سنکتر اش تبریز [ی]

Նկար 2

²⁴ Նույն տեղում՝ էջ 51-52:

Թարգմանությունը՝

1. Այստեղ իմ անունն է գրված


2. Աստված, ինչպիսի՞ն կլինի իմ վերջը Բահրամ քարտաշ
Թավրիզցի

Ընդհանուր առմամբ, XII դարից զգացվում է պարսից լեզվի ազդեցության ուժեղացումը տարածաշրջանում: Չնայած, որ արաբերենը մնում է պաշտոնական վիմագրերի լեզու, սակայն արձանագրությունների մեջ սկսվում է օգտագործվել պարսկերեն բառեր, թվականներ, անձնանուններ կամ ամբողջ արտահայտություններ:

Այսպես, օրինակ XII դարին պատկանող նորահայտ Բջնիի ամրոցի միջնաբերդից գտնված արձանագրությունը պարունակում է պարսկերեն արտահայտություն: Այն հայտնաբերվել է 2007 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբի կողմից՝ Բջնիի ամրոցի պեղումների ժամանակ: Քարը գտնվել էր ամրոցի մաքրման աշխատանքների ընթացքում՝ միջնաբերդում՝ ջրհոր հիշեցնող կառույցից²⁵ (Նկար 3)²⁶.

²⁵ Տ. Միքայելյան, Բջնիի ամրոցից XII դարի նորահայտ պարսկերեն արձանագրությունը, ՄՄԱԵԺ, Հատոր XXXII, Պրակ I, 2019:

²⁶ Արշավախմբի մասնակից Հ. Հակոբյանի բանավոր հաղորդում:



Նկար 3

Արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն ավելի մեծ արձանագրության բեկոր է:

Արձանագրությունը իրենից ներկայացնում է 5 տող ռեփինֆային գիր նախ գրատեսակով.

- 1). [كم] ?
- 2). [اسفه] سلا ر محمد طوسي. ...
- 3). [ر.] ? . اندری ؟! سلا [م] ..
- 4). خدا بر همه ر [حمت كند] .
- 5). [سنة] ... عین و خمس ما [نه] ...

Թարգմանությունը՝

1. [քմ]?
2. Իսֆահ[սալար] Մուհամմադ Թուսի
- 3.[...]. Իսլամի [?]....
- 4.Աստված օրհնի բոլորին
- 5.Հինգ հարյուր և [...]ասուն? թվական

Մեր կարծիքով՝ այս արձանագրությունը, արաբերեն թվականների վերջավորությունից դատելով, թվագրվում է XII դարով, ավելի ստույգ հիջրայի թավականի 70-կաններից մինչև 90-

ականները (մ.թ. 1175թ.-ից մինչև 1183թ.). Տասնորդական թվականը հնարավոր չէ ավելի ճշգրիտ թվագրել, քանի որ համապատասխան մասը բացակայում է²⁷:

Ինչպես վերը նշվեց, արաբերեն (կամ պարսկերեն բառեր պարունակող արաբերենով) արձանագրություններ փորագրվել են նաև հայ իշխանական տների ներկայացուցիչների կողմից կառուցված կարևոր շինությունների վրա: Այսպես, պարսկերեն որոշ բառերի օգտագործմամբ է արվել Վայոց Ձորի Սուլեմա կամ Սելիմի քարավանատան Օրբելյանների հանրահայտ արձանագրությունը (1332 թ.): Քարավանատան հայերեն արձանագրությունը փորագրված է նախասրահում²⁸, մինչդեռ արաբատառը (որն այժմ ամբողջովին հողմնահարված է և անընթեռնելի)՝ մուտքի վրա²⁹ (Նկար 5): Օգտագործված պարսկերեն բառերն են خان («քարավանսարայ»), در (ժամանակացույց տվող նախդիր), պարսկերենի ուղղագրությամբ է գրված دولت («իշխանություն», «թագավորություն») բառը:

²⁷Տ. Միքայելյան, Բջնիի ամրոցից XII դարի նորահայտ պարսկերեն արձանագրությունը, ՄՄԱԵԺ, Հատոր XXXII, Պրակ I, 2019, էջ 328:

²⁸Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, III, Երևան, 1967, էջ 180-181:

²⁹Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 164:



Նկար 4

Պարսից լեզվի ազդեցությունը երևում է նաև արաբերեն բառերի պարսկերեն հնչողությամբ գրված լինելու հանգամանքից՝ արաբերենի ճիշտ ուղղագրության փոխարեն: Այսպես, օրինակ, Սյունիքի Որոտնավանի (նախկինում՝ Ուրուտ, Որոտն) ուշմիջնադարյան մուսուլմանական գերեզմանոցի տապանագրերի վրա հանդիպում են ռամազան՝ ռամադանի փոխարեն³⁰, պարսկերեն նախդիրներ և իզաֆեթ, օրինակ [...] از مرض جلدى «[վախճանվեց] մաշկային հիվանդությունից»՝ XVII դարի տապանաքարի վրա³¹:

Մինչ այժմ հայտնաբերված պարսկերեն վիմագրերից ուշագրավ է 1351 թ.-ի Եղեգիսի եռալեզու արձանագրությունը. այն փորագրված է հայերեն և արաբերեն վիմագրերի հետ միասին՝

³⁰ А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, No 58(1), Ереван, 1987, с. 68.

³¹ Նույն տեղում՝ էջ 68 No 79(22):

Սուրբ Նշան եկեղեցու մոտ գտնվող գերեզմանոցի հարավային մասում գտնվող սալաքարի վրա³²:

Պարսկերեն արձանագրությունը հետևյալն է (Նկար 5):


[1] ز شكر تو مصر و روم و چین خواهد بود

[2] هر که خواهد بود

Թարգմանությունը՝

1. Ի նշան երախտապարտության, եգիպտոսն ու Չինաստանը կլինի քոնը

2. Այն ամենը ինչ կլինի³³



Նկար 5

Պարսից լեզվով է փորագրված նաև Ագարակաձորի կամրջի սալիկներից մեկի վրա խիստ վնասված եռատող արձանագրությունը, որի սկիզբը, ամենայն հավանականությամբ, արված է աջ կողմում գտնվող սալաքարի վրա. այն այժմ

³² А. Хачатрян, Трехязычная надпись из Елегиса, Кавказ и Византия, выпуск 3, Ереван, 1982. А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, с. 67.

³³ Սա, հավանաբար պարսիկ բանաստեղծուհի Մահսաթիի ռուբաիի բառափոխումն է. <https://ganjoor.net/mahsati/robmah/sh46>:

ամբողջովին քայքայված է: Մեր կարծիքով՝ գիրը փորագրված է կամուրջի 1758 թ.-ին վերանորոգման առիթով³⁴ (Նկար 8):



Նկար 6

Մեկ այլ արձանագրություն մենք հայտնաբերել ենք Արագածոտնի մարզի Լեռնարոտ գյուղի մերձակա բարձրադիր արոտավայրում³⁵: Այն վկայում է 1858 թվականի ջրանցքի հիմնադրման մասին³⁶ (Նկար 8): Վիճագիրը ցույց է տալիս, որ Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանի նվաճումից երեսուն տարի անց էլ տեղի մուսուլմանների համար՝ անկախ ազգային պատկանելության, պարսկերենը շարունակել է մնալ հեղինակակալոր լեզու:

³⁴ Տ. Միքայելյան, Ագարակաձորի կամրջի պարսկերեն արձանագրությունը, ՄՄԱԵԺ, Հատոր XXXII, Պրակ II, 2019:

³⁵ Արձանագրության մասին մեզ տարիներ առաջ տեղեկացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից, հնագետ-վիճագրագետ Հ.Մելքոնյանը:

³⁶ Տ. Միքայելյան, Լեռնարոտ գյուղի (Արագածոտնի մարզ) մոտակա ջրանցքի պարսկերեն արձանագրությունը, ՄՄԱԵԺ, Հատոր XXVI, 2007:



Նկար 7

Պարսկերեն արձնագարություններ պարունակող կամ իրանից ծագած առարկաներ՝ անոթներ, կնիքներ կարելի է հանդիպել նաև մարզային երկրագիտական թանգարաններում, կամ վերջին տարիներին պեղումներից հայտնաբերված գտածոների շարքում:

Այսպես, օրինակ՝ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում պահվում է سعادت باد «բարի բախտ» գրությամբ մատանի (Նկար 8) և կամ 2021 թ.-ի Երևանի մանկական այգու պեղումների ժամանակ գտնված Ղաջարական հարստության Ֆաթի-Ալի շահի (1772–1834) զինանշանով սպասքը: Սպիտակ և կապույտ գույներով ներկված հախճապակու վրայի գիրը հետևյալն է.

4. sane-ye[?] 71 ustāhā-ye Tabrīz
3. šāhanšāh-e Irān
2. Fath ‘Ali -šāhe ‘azam
1. mobārak bād bar

Թարգմանությունը՝

Շնորհավորանքներ մեծ ...Ֆաթի Ալի-Շահին, իրանի շահնշահին,
... կրոնի[?]

71 տարի[?] Թավրիզի վարպետներ [استاها تيريز]³⁷ (Նկար 9):

Դոկտոր Մալեքզադեի հաղորդմամբ՝ այսպիսի սպասքը պատվիրվում էր Չինաստանում, որտեղ չհասկանալով գրության նշանակությունը, բառերի դիրքը հաճախ փոխվում էր և, փաստորեն, դրանք դժվարընթեռնելի էին դառնում: Այս ափսեի դեպքում տեքստը պետք է ընթերցել վերևից ներքև: Տեքստի տողերի բաժանումը պայմանական է, քանի որ բառերը միախառնված են իրար (ինչպես, օրինակ ‘*azam*, *Fath* ու ‘*Ali* բառերը) և տողերի անջատումը հստակ չէ:

«Թավրիզցի վարպետներ» բառակապակցություն կա, օրինակ, նաև Բուրսա քաղաքի Յեշիլ մզկիթի սալիկներից մեկի վրա³⁸ (Նկար 10):




Նկար 8

³⁷ Սալիկը պեղել է ՀՀ ԿԳՍՄ նախարարության անդընթեր Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատակից Մերի Սաֆարյանը (Սաֆարյան 2022: 51, 52): Գրի վերծանության մեջ մեզ օգնություն է ցուցաբերել դոկտոր Մեհրդադ Մալեքզադեն՝ Իրանի մշակութային ժառանգության նախարարության աշխատակիցը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

³⁸ B. O’Kane, *The Tiles of Many Hues, The Development of Iranian Cuerda Seca Tiles and the Transfer of Tilework Technology, And Diverse are Their Hues: Color in Islamic Art and Culture*, New Haven and London, 2011, p. 193.



Նկար 9



Նկար 10

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության տարածքում XII դարից սկսած արաբատառ արձանագրություններում կարևորվել է պարսից լեզուն, նրա դիրքերը հատկապես ամրապնդվում են ուշ միջնադարում. պարսից լեզուն դառնում Հայաստանում բնակվող

մուսուլմանների գրավոր հաղորդակցման միջոցը: Արաբատառ արձանագրությունները սկսում են գրվել պարսկերեն արտահայտություններ պարունակող արաբերենով: Սա, զարմանալի չէ, քանի որ Արևելյան Հայաստանը գտնվում էր իրանական մշակույթի խիստ ազդեցության տակ՝ լինելով թյուրքալեզու ցեղերի, այնուհետև իրանական հարստություններից կախյալ խանությունների տիրապետության տակ: Մինչև 1920-ականները Արևելյան Հայաստան ներթափանցած թյուրքալեզու տարրը, որը, հետագայում ստացավ «ադրբեջանցիներ» անվանումը ուներ թույլ ազգային ինքնագիտակցություն, հակառակ կրոնականի (շիա իսլամ): Պարսկերենը լինելով շիա իսլամի հզոր մշակույթ ունեցող տերության՝ Իրանի լեզուն, հեղինակություն էր վայելում նրանց շրջանում:

TIGRAN MIKAYELYAN
Institute of Oriental Studies, National Academy
of Sciences of the Republic of Armenia
Department of Eastern Sources and Historiography
Researcher
E-mail: mtigran2002@yahoo.com

PERSIAN-LANGUAGE EPIGRAPHIC HERITAGE OF THE REPUBLIC OF ARMENIA

The conquest of Armenia by the Muslim rulers was often accompanied with encouraged infiltration of Arabs and later Kurds, Persians, and mostly Turkic-speaking nomadic tribes especially after the mass deportation of the Armenians to Iran by Shah Abbas in 1604 and the following years.

The Muslim rulers and their ordinary subjects residing in Armenia have left their traces in the forms of various epigraphic inscriptions (constructional, memorial mostly as tombstones).

Among the Arabic-lettered inscriptions of the 9-19 cc. (the absolute majority of which are tombstones traditionally written in Arabic) some have also been carved in the Persian language.

Small pieces of Persian inscriptions appear along Kufi script Arabic graffiti on walls of pagan Garni Temple dating back to the 9-10 cc. like دعا گفت 'said a prayer', رفت 'went' and personal name Nushirwan (Picture1) . Another cursive *naskh* mentions stone master Bahram from Tebriz (Picture 2).

From the 12th century onwards, it is possible to observe the increased influence of the Persian language. Although Arabic remained the main language of the Islamic memorial monuments, Persian words, personal names, numerals or complete sentences are started to be used in the Arabic epigraphic inscriptions.

One of such inscriptions is the one dating to the 12th and found from the citadel of Bjni fortress (Kotayk region of Armenia) (Picture 3).

Inscriptions in Arabic containing Persian words have also been carved by representatives of the Armenian princely dynasties which indicates the increasing importance of this language in the region. The famous inscription (now fully weathered) by Chesar Orbelian of Orbelian princely dynasty on Sulema or Selim Caravanserai (currently in Vayots Dzor region) communicating the date (1332) and the sponsors of this massive structure (Picture 4) is one of this kind. The Armenian inscription is carved in the lobby of the caravanserai, while the Arabic-Persian, now completely weathered, has been cut at the entrance slab (Picture 4). The Persian words used were خان ('caravanserai'), preposition در while the words دولة is written with Persian orthography as دولت . We think that the syntax of the inscription is characteristic of the Persian language.

The increasing influence of the Persian languages can also be seen in using ت instead of ة ('ta marbuta' instead of 'full ta') and sometimes ز instead of ض . Thus, e.g. in medieval Muslim tombstones of Vorotnavan (formerly Vorotn or Urut, Sisian subregion), we meet رمضان instead of رمضان , use of Persian prepositions and *status constructus (izafet)* as in the expression از مرض جلدی [died of...] "a skin decease" on a tombstone of the 17th century.

Among the so far discovered Persian inscriptions there is one remarkable made together with an Armenian and Arabic texts, fixed in

a flat stone slab installed in the southern part of the Armenian cemetery near St. Nshan Church in Yeghegis (Vayots Dzor region), usually referred to as ‘the three-language inscription’; (Picture 5). Actually, it is the epitaph of some Tawakkal, a Christian Armenian doctor, member of *akhi* medieval craft guild according to the researcher.

The Persian language was used on the Agarakadzor bridge inscription made on a stone slab, the beginning of which to all probability was made on the right-side slab which is completely erased (Picture 6). Another inscription on a formless stone put in high-altitude pasture at a distance of a few kilometers from the village of Lernarot in the north-western Aragatsotn informs about founding a channel in 1858 (Picture 7). Using of the Persian language by local Muslims thirty years after conquering of Eastern Armenia by Russia (1828) indicates that Persian still remained a practicable language among them.

It should be noted that the museums of Armenia in their turn also display objects dating to late medieval period of the 19th century (seals, amulets, vessels) containing Persian inscriptions some of which have been excavated in the recent years.

Thus the Regional Museum of Yeghegnadzor preserves a ring containing “good luck” wish *sa’adat bād* سعادت باد (Picture 8). A blue-coated plate-vase was excavated in 2021 from Yerevan’s Children’s Garden illustrating Fat’h-Ali Shah Qajar’s (1772–1834) coat of arms with the inscriptions including Fath-Ali Shah and ‘masters of Tabriz’ (Picture 9). To compare please see a tile of Yeşil Mosque of Bursa with the same phrase - ‘masters of Tabriz’ (Picture 10).

It can be noted that the Persian was increasingly important language of Islamic epigraphy in Eastern Armenia from the 12th century onwards, its positions are especially strengthened in the late Middle Ages, when the Persian language become the written language of important official communication: e.g. the sharia notarial documents are written in Persian. Eastern Armenia passed under the control of the Turkic-speaking mostly Shiite tribes that the Iranian state used them as a military against Ottoman Empire and Russia. They have been under

the strong influence of the Iranian culture, and Persian meant a language of Shiite civilization for them.

Until the 1920s, the Turkic-speaking elements that has penetrated Eastern Armenia, which later received the name ‘Azeris’ or ‘Azerbaijanis’, had a weak national self-consciousness and were under the strong influence of the Iranian culture. The Persian language was the language of Shia Islam and a country with powerful and distinguished culture - Iran therefore enjoyed prestige among them for a very long time onwards.

Լուսանկարների աղբյուրներ

Նկար 1.	Хачатрян 1987 – Хачатрян А., Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, էջ 53
Նկար 2	Хачатрян 1987 – Хачатрян А., Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, էջ 51-52
Նկար 3	Հողվածի հեղինակի լուսանկար
Նկար 4	Եղեգնաձորի երկրագիտական թանգարան
Նկար 5	Хачатрян 1987 – Хачатрян А., Корпус арабских надписей Армении, Ереван, 1987, էջ 67
Նկար 6	Հողվածի հեղինակի լուսանկար
Նկար 7	Հողվածի հեղինակի լուսանկար
Նկար 8	Եղեգնաձորի երկրագիտական թանգարան
Նկար 9	ՀՀ ԿԳՍՄ նախարարության անոթներ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն
Նկար 10	O’Kane B., The Tiles of Many Hues, The Development of Iranian <i>Cuerda Seca</i> Tiles and the Transfer of Tilework Technology, And Diverse are Their Hues: Color in Islamic Art and Culture, New Haven and London, 2011, էջ 193